



Մ Ա Յ Ր Զ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ 1949 ԹՎԻՆ

(Զրույց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ
բնկ. Վ. Համբարձումյանի հետ)



Րական թերթի աշխատակցի հետ ունեցած զրույցի ընթացքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը հայտնել է հետևյալը.—

Արագ թափով զարգացող ժողովրդական տնտեսությունը նորանոր խնդիրներ է դրել Ակադեմիայի գիտական հիմնարկների ու գիտական աշխատողների առաջ: Պետք է ասել, որ վերջերս բավական մեծ աշխատանք կատարվեց գիտությունը արտադրությանը ափսոսանք մերժող մեթոդներով գործում, ուժեղացավ արտադրության առաջավորների և գիտնականների համագործակցությունը: Չատ գիտական հիմնարկներ սերտ կապ են հաստատել համապատասխան արտադրական օբեկտների հետ, նրանց հետ կազմել են միասին աշխատելու պլաններ և հաջողությամբ կատարում են իրենց առաջադրանքները:

Երկրաբանական և Բիոֆիզիկական ինստիտուտը առաջադրել է նոր շինանյութեր և մշակել շինարարական պրակտիկայում գործադրվող կոնստրուկցիաներ: Հատուկ ուշադրություն է դարձվում շինարարության վրա գործածվող քարերի մշակման մեթոդային մանր: Ինստիտուտի նախագծով պատրաստել են նոր տիպի քար կտրող հաստոցներ, որոնք օգտագործում են ռեսպոնսիվայի խոշորագույն նորակառույցներում:

Երկրաբանական և Բիոֆիզիկական ինստիտուտները լաբորատոր հետազոտություններով տեղական հումքից՝ քվարցային ավազից ստացել են բարձրորակ ապակի: Գիտության այդ նվաճումը ռեսպոնսիվայում ստեղծում է բարձրորակ ապակու արտադրության մեծ հեռանկարներ: Հետազոտվում են Հայաս-

տանի ստորերկրյա ջրերը և հանքային աղբյուրները՝ ժողովրդական տնտեսության և առողջապահության մեջ օգտագործելու համար...

Իյուրականի աստղադիտարանը, որի շինարարությունը և սարքավորման աշխատանքը դեռևս շարունակվում է, ուսումնասիրում է գալակտիկայի կառուցվածքը, հասկանալի նոր տիպի աստղային սիստեմաները՝ աստղային աստղերաները, որոնք հայտնաբերվել են այս աստղադիտարանի կողմից:

Նաղդադործության և գինեգործության ինստիտուտը հաջողությամբ կատարում է խաղողի տեղական և ներմուծված վաղահաս փոփոխական սորտափորձարկում, նպատակ ունենալով այդ կուլտուրան տարածել կենդանական, Թալինի, Իլիշանի շրջաններում: Ինստիտուտի պլանի մեջ է մտնում այգեգործության տարածումը Հայաստանի նախալեռնային և լեռնային շրջաններում: Այստեղ մշակվում են նաև խաղողի վաղի բերքատվության բարձրացման, բարձրորակ գինիներ պատրաստելու գիտական հիմունքները:

Արդյունավետ աշխատանք է կատարում Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտը, որին հաջողվել է ստանալ ցորենի մի շարք արժեքավոր սորտեր, որոնց թվում՝ Հիբրիդ № 9, «Արտաշատի № 42», «Եղվարդի № 4» և այլն: Ինստիտուտը աշխատում է բամբակի նոր սորտեր ստեղծելու և այդ կուլտուրայի բերքատվությունը բարձրացնելու հարցերով:

ՍՍՌ Մինիստրների Սովետի որոշմամբ ռեսպոնսիվայում կազմակերպված Պտղաբուծության ինստիտուտի նպատակն է Հայաստանում զարգացնել և տարածել մերձաբևադարձային կուլտուրաներ՝ ձիթենի, թուզ,

նուտ, կիտրոն, մանդարին, նուշ, բադամ, արևելյան խորմա, թեյ և այլն: Նորաստեղծ ինստիտուտը միաժամանակ զբաղվելու է Հայաստանում աճող պտղաբուծական կուլտուրաների սորտերի բարելավման և նրանց բերքի բարձրացման հարցերով:

Ուսումնասիրվելու են Հայաստանի վայրի պտուղները՝ նոր սորտեր առաջացնելու նպատակով:

Ակադեմիան ստեղծել է խոշոր էքսպերիմենտալ բազա, որտեղ փորձնական աշխատանքներ են կատարում գյուղատնտեսական բաժանմունքի գիտա-հետազոտական հիմնարկները:

Գիտական և գործնական կարևոր նշանակություն ունի Բուսաբանական ինստիտուտի կողմից կատարվող բույսերի ծաղկման, պտղակալման և ծերացման պրոցեսների ուսումնասիրությունը: Ինստիտուտը բազմակողմանիորեն ուսումնասիրում է Հայաստանի օրիգինալ և հարուստ բուսականությունը: Հետազոտվում են Սևանա լճի շոթակայքի նոր մշակվող տարածությունները՝ գյուղատնտեսական կուլտուրաներ աճեցնելու նպատակով:

Կանաչազարդման խնդիրը առաջնակարգ նշանակություն ունի ռեսպուբլիկայի համար: Այդ գործնական հարցով զբաղվում են Բուսաբանական ինստիտուտը և Բուսաբանական այգին: Հայաստանի տարբեր գոտիների համար ընտրվում են համապատասխան ծառատեսակներ, սկսված է Երևան—Սևան խճուղու կանաչազարդման պայմանների հետազոտումը: Ուշագրավ են Հայաստանի սոճու անտառների ընդարձակման ու բարելավման և դաշտապատման գոտիներ ստեղծելու ուղղությամբ տարվող հետազոտությունները: Բուսաբանական այգին և Բուսաբանության ինստիտուտը զբաղվում են նաև մերձարևադարձային կուլտուրաների ուսումնասիրությամբ: Բուսաբանական այգին ու նրա բաժանմունքները հետազոտում են ռեսպուբլիկայի ծառատեսակներն ու թփերը, ծաղկատեսակները, կերպրույսերը, դեղատու և յուղատու բույսերը, որոնք շատ կարևոր են մեր ժողովրդական տնտեսության համար: Այս երկու գիտական հիմնարկների միացյալ ուժերով գրվում է Հայաստանի ֆլորան՝ բազմահատոր աշխատությունը:

Գիտական խոշոր պրոբլեմների վրա է աշխատում Ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Նըրսիս Հասրաթյանի ղեկավարությամբ Ֆիզիոլոգիայի ինստիտուտը զարգացնում է Պալլոպի ուսմունքը՝ կենտրոնական ներվային սխեմայի ֆունկցիայի

վերաբերյալ, նպատակ դնելով հետազոտական արդյունքները կիրառել կլինիկաներում: Արդյունավետ աշխատանք են կատարում Հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական ինստիտուտները: Պատմության ինստիտուտը միջնակարգ դպրոցների համար կազմում է հայ ժողովրդի պատմության դասագիրքը, որը շուտով կավարտվի և կհանձնվի հրատարակության: Դասագրքի երկրորդ մասը ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը՝ 19-րդ դարից մինչև մեր օրերը:

Ակադեմիկոս Մառի անվան լեզվի ինստիտուտի թեմատիկ պլանի մեջ կարևոր տեղ են զբաղում մարքսիստական լեզվաբանության, հայաեռիտության վերաբերյալ մշակվող հարցեր: Գրվում է հայոց լեզվի պատմության, բարոյականների, գրողների լեզվի մասին գիտական աշխատություններ: Ինստիտուտի ուշագրավ աշխատանքներից պետք է համարել կազմվող ռուս-հայերեն քառահատոր բառարանը, սովետական մեծ լեզվաբան Մառի 5 հատորաւ աշխատությունների հայերեն հրատարակությունը և արյն:

Արվեստի պատմության սեկտորը ծավալուն հետազոտություններ է կատարում հայ երաժշտության պատմության ու տեսության պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ: Ուսումնասիրվում է Մպենդիարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունը՝ կապված ռուսական կլասիկ երաժշտության ռեալիստական ուղղության հետ: Սեկտորը հրատարակում է հայ կոմպոզիտորների երաժշտական ժառանգությունը: Արդեն պատրաստ է հրատարակության Մպենդիարյանի ստեղծագործությունների 2-րդ և 9-րդ հատորները և Սպիրիդոն Մելիքյանի ժողովրդական երգերի առաջին և երկրորդ ժողովածուները: Մեծ ուշադրություն է դարձվում հատկապես սովետական շրջանի ճարտարապետության ու կերպարվեստի ուսումնասիրությանը:

Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտը այս տարի գլխավոր ուշադրությունը դարձրել է հայ գրականության պատմության դասագրքի վրա: Նա պատրաստում է Հայ գրականության պատմություն՝ 6 հատորով, որի վերջին հատորը ամբողջությամբ նվիրված է սովետահայ գրականությանը:

Ինստիտուտը ավարտել է Միքայել Նալբանդյանի երկերի ակադեմիական հրատարակությունը և շարունակում է Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակությունը: Ավարտված է Ստալինը հայ ժողովրդական բանահյուսության մեջ՝ ժողովածու:

Այս տարի կատարվել են հնագիտական ընդարձակ պեղումներ Կարմիր քյուլում, որ-

տեղ հայտնաբերվել են շատ արժեքավոր նյութեր: Պեղումներ են կատարվում միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինում:

Այս տարի Գիտությունների ակադեմիան կազմում է գիտա-հետազոտական աշխատանքները արտադրության մեջ արմատավորելու ընդարձակ պլան, ըստ որի նախատեսվում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ ներդնել մեր գիտա-հետազոտական ինստիտուտի կողմից ավարտված բազմաթիվ աշխատանքներ: Օրերս Ակադեմիայի նախագահության ընդլայնած նիստը քննության առավ 1950 թվի գիտա-հետազոտական աշխատանքների պլանները, 1950 թվի համար: Գիտությունների ակադե-

միան հետադառվում ավելի կոմեդացնի գիտության և արտադրության կապը:

Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիան բռնել է զարգացման լայն ուղի, տարեցտարի ծավալվում են նրա գիտական աշխատանքները, ընդարձակվում գիտական հիմնարկների ցանցը, պատրաստվում է երիտասարդ գիտական աշխատողների հիանալի սերունդ: Մեր Ակադեմիայի այդ առաջընթացը բխում է ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեծ վերելքից, լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունից և ցույց է տալիս մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի անսահման հոգատարությունը հայ ժողովրդի նկատմամբ:

(«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ», 1949 թ., հոկտ. 10)

ԻՆՉ ՑՈՒՅՑ ՏՎԻՆ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Օրերս ավարտվեցին Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի և Պետական էրմիտաժի հնագիտական միացյալ էքսպեդիցիայի պեղումները Կարմիր բլրում:

Քվադրությունից 8—7 դար առաջ կառուցված ուրարտացիների բերդի մնացորդները: Բլրի հարավային և արևմտյան կողմերում տարածված են ուրարտական քաղաք Թելչե-



Կարմիր բլրում հայտնաբերված սեպագիր արձանագրությունը:

Կարմիր բլուրը, ինչպես հայտնի է, գտնվում է Նրեանից ոչ հեռու, Զանգու գետի ձախ ափին: Այնտեղ պահպանվել են մեր

բախնի ավերակները, որը ներկայումս ՍՍՌՄ-ի տերիտորիայում դառնափոխվող քաղաքներից հնագույնն է: